ՀՏԴ 94(479.243)

Պատմություն

Իսկուհի ԱՎԱՆԵՍՅԱՆ
ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. ,
E-mail: iskuhi82@mail.ru

ԿԻՆ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

1991թ. դեկտեմբերից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիան արտահայտվում էր բացահայտ զինված ներխուժումներով՝ տարածքները զավթելու, հայ ազգաբնակչության բռնի տեղահանմանը նպատակադրված գործողություններով: Ազատագրական պայքարի խորացմանը զուգահեռ օրեցօր ավելի ու ավելի էին ծավալվում ռազմական գործողությունները, որոնց ընթացքում էլ ստեղծվեց ինքնապաշտպանության համակարգը:

Ինքնապաշտպանական մարտերին միացան հարյուրավոր կին կամավորականներ, որոնց հիմնական մասը բուժօգնություն էր ցուցաբերում, անհրաժեշտության դեպքում նաև զենք վերցնում: Կին բուժաշխատողներն իրենց արժանի ավանդն ունեցան ազատամարտում: Նրանք ծանր ու դժվարին պայմաններում փրկեցին բազմաթիվ կյանքեր, շարք վերադարձրին հազարավոր ազատամարտիկների:

Բանալի բառեր՝ շարժում, պայքար, կամավորականներ, ջոկատներ, կանայք, ինքնապաշտպանություն, զոհեր, վիրավորներ, օգնություն, բուժաշխատողներ:

И. Аванесян

ЖЕНЩИНЫ- МЕДРАБОТНИКИ В АРЦАХСКОЙ ПЕРВОЙ ВОЙНЕ

Агрессия, развязанная Азербайджаном против Нагорно-Карабахской Республики с декабря 1991 года, проявлялась открытыми вооруженными вторжениями: с действиями, направленными на оккупацию территорий и насильственное перемещение армянского населения. Параллельно с углублением освободительной борьбы, день ото дня развязывалось все больше военных операций, в ходе которых и была создана система самообороны. Сотни женщин-добровольцев присоединились к

самооборонительным битвам, основная часть которых оказывала медицинскую помощь, а при необходимости, брались и за оружие. Женщины-медики внесли свой достойный вклад в освободительную войну.
Они в тяжелых и трудных условиях спасли многочисленные жизни, в ряды были возвращены тысячи бойцов.
Ключевые слова: движение, борьба, добровольцы, отряды, женщины, самооборона, жертвы, раненные, помощь, медработники.

I.Avanesyan

WOMEN MEDICAL WORKERS IN THE ARTSAKH FIRST WAR

Since December 1991 the aggression unleashed by Azerbaijan against the Nagorno-Karabakh Republic was manifested in open armed incursions aimed at occupying the territories and forcibly displacing the Armenian population. Along with the extended liberation struggle, more and more military operations expanded, during which the system of self-defense was created.
Hundreds of women volunteers joined the self-defense battles, most of them were providing medical assistance and, if necessary, taking up arms.
Women medical workers made a worthy contribution to the liberation struggle. They saved many lives in difficult conditions, thousands of liberators were returned to the ranks.
Key words: movement, struggle, volunteers, detachments, women, self- defense, victims, wounded, help, medical workers.

1990 թվականի սկզբից շոշափելի դարձավ Ղարաբաղյան հակամարտության լարվածության ուժեղացման միտումը՝ որպես կողմերի միջև բացահայտ զինված հակամարտություն: Ռազմագործողությունների ծավալումը ԼՂՀ-ին դրեց իր պաշտպանության կազմակերպման և կատարելագործման անհրաժեշտության առջև: Մարտական գործողություններին զուգահեռ սկսեցին կազմավորվել ՀՀ զինված ուժերը և ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը (հետագայում՝ ԼՂՀ պաշտպանության բանակ):

1991թ. վերջերին և 1992թ. սկզբներին ԼՂՀ տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ[1]: Դա հնարավորություն տվեց հակամարտ ուժերի անհավասարության պայմաններում կազմակերպված իրականացնել Արցախի ինքնապաշտպանական մարտերը:

[1] ***Հասրաթյան Ս.***, *Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001, էջ 27:*

Ազատամարտում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև քաղաքացիական բժշկությունից միանգամից ռազմական բժշկության անցած շատ բժիշկներ, բուժքույրեր, սանիտարներ, ովքեր ծանր ու դժվարին պայմաններում փրկեցին բազմաթիվ կյանքեր, շարք վերադարձրին հազարավոր ազատամարտիկների: Կին բուժաշխատողները, առհասարակ բուժանձնակազմը, Արցախյան առաջին պատերազմի պատմության մեջ ունեցավ իր ուրույն տեղը: Բուժաշխատողներից շատերը կանգնած էին Արցախի ռազմաբժշկության ստեղծման ակունքներում: Եթե սկզբնական շրջանում կամավորական ուժերի շարքերում մասնակցում էին տարբեր ռազմագործողությունների, ապա հաջորդ տարիներին հիմնականում կենտրոնանում էին շարժական հոսպիտալներում՝ փրկելով հազարավոր կյանքեր:

Շուշիի ազատագրմանը մասնակից Զուխրա Հայրապետյանը Ստեփանակերտում ճանաչված էր դեռևս 1988 թվականից: Նա բուժօգնություն էր ցույց տալիս հանրահավաքի մասնակիցներին, իսկ երբ սկսվեց պատերազմը, առանց վարանելու իր տեղը զբաղեցրեց ազատամարտիկների շարքերում: Առաջին մարտական մկրտությունը ստացավ 1991թ. Կրկժանի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Այնուհետև մասնակցեց Շուշիի, Մալիբեկլուի, ապա Խոջալուի ազատագրման գործողություններին[1]:

1992թ. սկզբին Ստեփանակերտում ստեղծվեց փրկարար ծառայություն, որի պարտականությունների մեջ էին մտնում վիրավորներին առաջին բուժօգնություն ցուցաբերելը և հիվանդանոց հասցնելը, զոհվածներին մարտի դաշտից դուրս հանելը, քաղաքում հրետակոծությունից տուժածներին օգնելը և այլն: Զ. Հայրապետյանն ընդգրկվեց փրկարար վաշտի առաջին դասակի կազմի մեջ: Իսկ արդեն 1993թ. հունվարին, նշանակվելով Կենտրոնական պաշտպանական շրջանի գումարտակի բուժկետի պետ, դրա կազմում մասնակցեց Հադրութի, Աղդամի, Ջաբրայիլի, Ղուբաթլուի, այնուհետև՝ Գյուլուջա և Արծվաշեն գյուղերի ազատագրմանը[2]:

---

[1] *Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., հանրագիտարան, Երևան, 2004, էջ279:*

[2] *Տե՛ս* ***Բալայան Ռ.,*** *Կանայք Արցախյան պատերազմի հերոսամարտում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», թիվ 1, Ստեփանակերտ, 2001, էջ 104: 1967թ. ավարտել է բժշկական ուսումնարանը. և աշխատանքի անցել շտապօգնության կայանում՝ որպես բուժքույր:Պարգևատրվել է ԼՂՀ «Շուշիի ազատագրման համար» և «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով, «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով: Հրադադարից հետո նա վերադարձավ Ստեփանակերտ՝ իր նախկին աշխատանքին:*

Շուշիի ազատագրմանը մասնակցեցին նաև Անուշ Ավագյանը[1], Հասմիկ Բաղդասարյանը[2], Մանուշակ Սարգսյանը[3], Ֆլորա Հակոբջանյանը, Սվետլանա Աբրահամյանը, Տանյա Առստամյանը, Մելսիդա Հարությունյանը, Աղավնի Սահակյանը[4], Համեստ Օհանյանը, Շուշանիկ Աբրահամյանը[5], Գոհար Դունամալյանը[6] և շատ ուրիշներ[7], որոնց մի մասը որպես ազատամարտիկ միացան ինքնապաշտպանական ուժերին, իսկ մի մասը կամավոր համալրեց բժշկական ջոկատը, որն ուներ մի նպատակ՝ վիրավորներին ցուցաբերել առաջին բժշկական օգնություն հենց մարտի դաշտում: Երբ հայկական միացյալ ուժերը պատրաստվում էին Շուշիի ազատագրմանը, այդ ժամանակ բուժքույրերը գտնվում էին երեք հարյուր հոգուց կազմված միավորման մեջ, որն ապրիլի 28-ից տեղավորվել էր Սղնախ գյուղում: Վերջիններս ապրում էին ծղոտից պատրաստված տնակի մեջ, և բոլորը սպասում էին վճռական գրոհին՝ նպատակ ունենալով ազատագրված տեսնել Շուշին:

Հակառակորդի կողմից սկսված լայնածավալ գործողություններին դիմակայելու և հետ շպրտելու համար ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը

---

[1] *Անուշ Ավագյանը դեռևս 1991թ. ձմռանը միացավ Ստեփանակերտում Կարո Բաբայանի հրամանատարությամբ գործող ջոկատին և անմիջապես մասնակցեց Մարտունու շրջանի Ղարադաղլու (Վարանդա) գյուղի ազատագրման համար մղվող մարտերին: Շուշիի ազատագրմանը մասնակցելուց հետո վաշտի հետ փառավոր ուղի անցավ՝ Լաչինի միջանցքի, Բերդաձորի ենթաշրջանի, Մարտակերտի և Ասկերանի շրջանների, Նախիջևանիկ և Փրջամալ գյուղերի ազատագրական մարտեր, որտեղ և ծանր վիրավորվեց: Չնայած դրան, ապաքինվելուց հետո նորից վերադարձավ մարտի դաշտ: 1993թ. նախքան Վաղուհասի վրա գրոհելը հանկարծակի հրետակոծություն սկսվեց հակառակորդի կողմից, որի ժամանակ էլ Անուշ Ավագյանը զոհվեց:*

[2] *Շուշիի ազատագրումից հետո Հասմիկ Բաղդասարյանը շարունակեց մարտական ուղին և մասնակցեց Ասկերանի, Մարտակերտի շրջանների ազատագրական պայքարին: Բազում վտանգներից փրկվելով և ողջ մնալով՝ զոհվեց Ստեփանակերտում, հերթական ռմբակոծության ժամանակ՝ 1992թ. օգոստոսի 22-ին:*

[3] *Մանուշակ Սարգսյանը, Ֆլորա Հակոբջանյանը և Համեստ Օհանյանը, մասնակցելով տարբեր շրջանների ինքնապաշտպանական մարտերին, իրենց ներդրումն ունեցան հայրենի հողի ազատագրման գործում: Միանալով Աշոտ Ղույլանի (Բեկոր) ջոկատին՝ մասնակցեցին Շուշիի ազատագրմանը և առաջիններից էին, ովքեր ոտք դրեցին ազատագրված քաղաք: Այդ ընթացքում Մանուշակ Սարգսյանը վիրավորվեց ողնաշարից, սակայն, ապաքինվելուց հետո վերադարձավ մարտի դաշտ, ավելին՝ 1993թ. Հադրութի շրջանի Տող գյուղի, Աղբուրունի, Սիմեոնբեյլիի ռազմական գործողություններին մասնակցելու համար արժանացավ հրամանատարության շնորհակալությանը (հրամանատար՝ գնդապետ Հ. Հարոյան): Լինելով մարտական գործողությունների (Կրկժան, Խոջալու, Շուշի, Հադրութ, Մարտունի) թեժ կետերում՝ նրանք պայքարը շարունակեցին մինչև հրադադար:*

[4] *Սվետլանա Աբրահամյանի, Մելսիդա Հարությունյանի և Աղավնի Սահակյանի մարտական ուղին անցել էր հիմնականում Արցախի հյուսիսարևելյան շրջանում:*

[5] *Տանյա Առստամյանը և Շուշանիկ Աբրահամյանը միասին հիմնականում մասնակցել են Արցախի հարավարևելյան շրջանների ինքնապաշտպանությանը:*

[6] *Երկրաշարժից հետո նա տեղափոխվում է Արցախ և որպես զինվորական բուժակ Ասկերանի պաշտպանական շրջանի հետ մասնակցում մի շարք ռազմագործողությունների:*

[7] *Տե՛ս «Մարտիկ», 2004, 10 մայիսի, թիվ 12:*

դիմեցին համակարգված ռազմագործողությունների, որին միացավ նաև կանանց վաշտը:

1992թ. ամռանը Ժաննա Գալստյանի առաջարկով և Արկադի Տեր-Թադևոսյանի աջակցությամբ՝ «Սպիտակ» փրկարարների խմբի բժիշկների ուժերով կազմակերպվեցին առաջին բուժօգնության դասընթացներ, որտեղ մասնակիցները յուրացնում էին քաղաքացիական պաշտպանության, առաջին բուժօգնության, ֆիզիկական պատրաստության, կապի և քարտեզագրության հիմունքները:

Դասընթացի ավարտից հետո 24 հոգուց բաղկացած խումբն ուղարկվեց Շուշիի ուսումնական կենտրոն՝ նախնական զինվորական պատրաստություն անցնելու համար, սակայն կանանց գումարտակ չկազմավորվեց : Արդեն 1992թ. դեկտեմբերին կանանց խումբը՝ Մարգարիտա Սարգսյանի[1], Կարինե Դանիելյանի[2], Եվգենյա Առստամյանի[3], Գայանե Առստամյանի[4], Անահիտ Պետրոսյանի[5], Անահիտ Թամրազյանի[6], Վարդուհի Գևորգյանի[7], Մարգարիտա

---

[1] *Երամսյա ռազմական պատրաստականություն անցնելուց հետո առաջին խմբի հետ մասնակցում է Շուշիի շրջանի Շոլան գյուղի մարտական գործողություններին, ապա Սարիաբաբ բարձունքի ռազմագործողություններին: Նա որպես փրկարար ջոկատի անդամ , նաև հրաձիգ, մասնակցում է Լաչինի, Մարտակերտի, Հադրութի, Աղդամի ազատագրական մարտերին: Զոհվել է 1993թ.:*

[2] *Կանանց ջոկատի հետ մասնակցելով մի շարք ռազմագործողությունների՝1993թ, օգոստոսին ծանր վիրավորվում է Կուբաթլուի շրջանում, ռազմագործողությունների ժամանակ և դառնում հաշմանդամ:*

[3] *Կանանց ջոկատին միանալուց հետո Վլադիմիր Ավագյանի (Վադո) գումարտակում մասնակցեց Քարվաճառի, Մարտակերտի, Հադրութի պաշտպանական և ազատագրական մարտերին:1993թ. օգոստոսին Կուբաթլուի շրջանի մարտերում ծանր վիրավորվեց և դարձավ երկրորդ կարգի հաշմանդամ:*

[4] *Դեռևս 1989թ. Գ. Առստամյանը որպես կապավոր միացավ կամավորական ուժերին և մեկնեց Բերդաձոր: Այստեղ մնաց մինչև 1991թ.: 1992թ. միացավ կանանց ջոկատին որպես բուժքույր:Վիրավոր ազատամարտիկներին առաջին բուժօգնությունը ցույց տալուց բացի , մասնակցում էր նրանց հիվանդանոց հասցնելու աշխատանքներին:Անհրաժեշտության դեպքում հանդես էր գալիս որպես կապավոր: Զորացրվեց 1995թ.:*

[5] *1992-1994թթ. տարբեր ջոկատների կազմում մասնակցել է Շուշիի, Մարտակերտի, Աղդամի, Հադրութի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, գրոհից գրոհ դարձել իսկական զինվոր բուժքույր: 1994թ. Վադոյի գումարտակում մասնակցել է Կարմիրավանի ուղղությամբ ընթացող ծանր մարտերին, սպասարկել մի քանի գումարտակների: Զինադադարից հետո ծառայության է անցել Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում որպես բուժքույր:Մարտերում ցուցաբերած հերոսության համար արժանացել է մեդալների և պարգևների:*

[6] *1992թ. որպես բուժքույր մասնակցել է Շուշիի, 80-81 բարձունքի գրավմանը: Մինչև զինադադարը մասնակցել է մի շարք ռազմագործողությունների: 1994-1995թթ. եղել է գումարտակի դեղատան վարիչ, իսկ մինչև 1997թ. ծառայել է հատուկ հետախուզական գնդում որպես բուժկետի վարիչ: Հետախուզական գործողություններին մասնակցելու համար ստացել է բանակի լեյտենանտ սպայական կոչում:*

[7] *1989թ. մտավ Կառլեն Առաքելյանի հրամանատարությամբ կազմավորված ջոկատի շարքերը որպես բուժքույր և մասնակցեց մի շարք ռազմագործողությունների: Մարտակերտի գրավումից հետո տեղափոխվեց Ստեփանակերտի հոսպիտալ: Հրամանատարի զոհվելուց հետո ջոկատը ցրվեց:1992թվականից կանանց գնդի հետ մասնակցեց մի շարք մարտերի: Հրադադարից հետո ծառայության անցավ զինվորական բժշկության ծառայությունում որպես բուժքույր:*

Թառանյանի[1] և Արեգա Սարգսյանի[2] մասնակցությամբ, մտավ 8-րդ վաշտի կազմ, որի հրամանատարն էր Մարտիկ Գասպարյանը[3]: Այդ պահից մինչև պատերազմի վերջը նրանք գտնվում էին ռազմաճակատի առաջնային գծում: Ինչպես նրանք են վկայում, արդեն մի քանի մարտերից հետո ռազմի դաշտում հմտացել էին և առաջին օգնությունը ցույց տալուց բացի, զենքը ձեռքներին մասնակցում էին հարձակողական գործողություններին: Նրանք դարձան հմուտ զինվորներ՝ իրենց մեջ դրսևորելով հայուհու առաքինի բնավորությունն ու վեհ գաղափարները:Կանանց վաշտը Շուշիի գնդի կազմում շարունակեց պայքարը և անցավ ողջ պատերազմը: Հետագայում այդ վաշտի հիման վրա ստեղծվեց 5-րդ գումարտակը: Նույնիսկ զինադադարի հաստատումից հետո նրանք մասնակցեցին Կարմիրավանի համար մղվող վերջին մարտերին[4]:

Արցախյան ազատամարտում հաճախակի երևույթ էր կռվող ազատամարտիկների կամ ռազմի դաշտում գտնվող բժիշկների կողքին տեսնել նրանց կողակիցներին, ովքեր, տանը թողնելով անչափահաս երեխաներին, իրենց ամուսինների հետ միասին մեկնում էին ճակատ:

1993թ. ամուսնու հետ Արցախ մեկնեց բժշկուհի Արմինա Նալբանդյանը[5]: Շահումյանը գրավված էր հակառակորդի կողմից: Հայաթափված գյուղերի ջոկատներից կազմված ջոկատները Շ. Մեղրյանի գլխավորությամբ բազմավորված էին Եղակեր տեղանքում: Այն թշնամու թիկունքն էր համարվում, և չափազանց դժվար էր այդտեղից վիրավորներին տեղափոխել Ստեփանակերտ կամ Երևան: Պաշտպանության նախարարության, ՀՕԽ-ի աջակցությամբ Ա. Նալբանդյանը Եղակերի բազայում կազմակերպեց դաշտային հոսպիտալ, որը գործեց մինչև 1993թ. դեկտեմբերի 27-ը: Հակառակորդի մեծ ուժերով հարձակումը ստիպեց «Եղնիկներ» ջոկատին նահանջել[6], և այն տեղափոխվեց **Արտատափ կոչվող** անտառոտ տեղանք: Ա. Նալբանդյանը նորից օգնության դիմեց և այստեղ հիմնեց նոր դաշտային հոսպիտալ, որի ծառայություններից օգտվում էին ոչ միայն «Եղնիկները», այլ նաև շրջակա բնակավայրերի և զորամիավորումների

---

[1] 1992թ. Շուշիի ազատագրումից հետո մի խումբ նվիրյալների հետ այստեղ հիմնեց «Ալեք Մանուկյան» վարժարանը:Մարտական մկրտությունը ստացավ 1992թ. աշնանը՝ որպես Արշավիր Ղարայանի հրամանատարությամբ գործող գումարտակի բուժքույր: Հրադադարը դիմավորեց Կարմիրավանի մատույցներում:Պատերազմից հետո ծառայությունը շարունակեց պաշտպանության բանակի շարքերում:

[2] Շարժման սկզբում միացավ կամավորական ուժերին որպես կապավոր, իսկ կանանց ջոկատին միանալուց հետո մինչև զինադադար մասնակցեց մի շարք ռազմագործողությունների : Զորացրվեց 1995թ.:

[3] Տե՛ս «Ազատ Արցախ», 2009, 9 մայիսի, թիվ 52:

[4] Տե՛ս Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., հանրագիտարան, էջ 277-290:

*[5] Տե՛ս **Վարդուման Հ.,** Կին ազատամարտիկները, Երևան, 2002, էջ 143:*

[6] Վիրավորների, զենք ու զինամթերքի հետ հնարավոր չէր էվակուացնել հոսպիտալը, հարկավոր էր ոչնչացնել՝ թշնամուն չթողնելու համար: Վիրավորված զինվորներին պատգարակներով տեղափոխում էին բժշկուհու անմիջական հսկողության ներքո: Շնորհիվ վերջինիս բոլոր վիրավորները տեղափոխվեցին Երևան :

կարիքավորները: Ենթարկվելով պատերազմի փորձությանը՝ Ա. Նալբանդյանը փրկեց բազմաթիվ ազատամարտիկների կյանքեր: Մատաղիսի ազատագրումից հետո բացվեց պարտիզանական ջոկատի շուրջ սեղմված շրջապատման օղակը: Բժշկուհին մինչև հրադադար մնաց ռազմի դաշտում, ապա վերադարձավ իր նախկին աշխատանքին:

Ժամանակի թելադրանքով 1992թ. հունվարին ստեղծվեց կամավոր բուժաշ-խատողների խումբ (հիմնադիր՝ Վ. Մարության), այնուհետև ստեղծվեցին ռազմադաշտային շարժական հոսպիտալներ, որոնք հետևում էին ինքնապաշտպանական ուժերին, իրագործում բուժօգնությունը դաշտային պայմաններում: Սկզբում կենտրոնական և շարժական հոսպիտալները համալրեցին Անժելա Հարությունյանը, Լիդա Աղաբեկյանը, Արևիկ Անդրյանը, Արմիդա Ավանեսյանը, Ալվարդ Բաղդասարյանը, Անժելա Գրիգորյանը, Անյուտա Թադևոսյանը, Ջուլիետա Խաչատրյանը, Գայանե Հայրապետյանը, Աիդա Ղույլանը, Սուսաննա Մարգարյանը, Նաիրա Իսրայելյանը[1]: Նրանք պատերազմի տարիներին անհնարինը դարձնում էին հնարավոր՝ փրկելով հարյուրավոր զինվորների կյանք: Պատերազմի թեժ օրերին կենտրոնական և շարժական հոսպիտալների բուժաշխատողների շարքերը ընդլայնվում էին կանանց[2] (Ռոզա Դադայան, Օֆելյա Սարգսյան, Հերմինե Հայրապետյան, Ֆլորա Հակոբջանյան, Ժենյա Առստամյան, Թամարա Դանիելյան, Էմմա Աբրահամյան, Ջուլիետա Հայրիյան, Գայանե Տոնյան, Գյուլչորա Գևորգյան, Ռայա Գրիգորյան, Ռայա Դանիելյան, Վեհանուշ Այվազյան, Գայանե Հայրապետյան, Արևիկ Անդրյան և ուրիշներ) շնորհիվ: Մարտական գործողությունների ամենավճռական ու թեժ պահերին նրանց մասնակցությամբ դաշտային հոսպիտալներում կատարվում էին բարդ վիրահատություններ: Նրանց անմիջական մասնակցությամբ ստեղծվեցին երեք բաժանմունքներ՝ վերակենդանացման, վիրահատման, վիրակապման: Ընդ որում, այդ բաժանմունքները կենտրոնական զինվորական հոսպիտալի կայացման գործում առանցքային նշանակություն ունեցան[3]: Վերակենդանացման բաժանմունքի ավագ քույր Անժելա Հարությունյանը վիրավորվեց 1992թ. օգոստոսին՝ Չլդրան գյուղում տեղակայված ռազմադաշտային հոսպիտալի հրթիռակոծման ժամանակ: Անգամ այս հանգամանքը նրան հետ չպահեց իր ընտրած ուղուց, շարունակեց մնալ շարքերում, սպեղանի դրեց շատ ազատամարտիկների վերքերին և անցնելով պատերազմի հորձանուտով՝ հաղթանակի բերկրանքը վայելեց ռազմադաշտային հոսպիտալում: Վերհիշելով այդ օրերի իրադարձությունները՝ նա վկայում է. «Օրեր էին լինում, որ վիրահատարանում դրված վիրահատական սեղանները չէին հերիքում, առավել ևս՝ խոշոր ռազմագործողությունների

---

[1] *Տե՛ս «Մարտիկ», 2010, 11 մարտի, թիվ 8:*
[2] *Նույն տեղում, 1998, 5-20 սեպտեմբերի, թիվ 10:*
[3] *Նույն տեղում, 2006, 7-15 հունվարի, թիվ 2:*

ժամանակ…Բուժանձնակազմն այնպես էր աշխատում, որ ոչ մի վիրավոր անօգնական չմնա…Տասնյակ հազարավոր մարդիկ՝ տղամարդ թե կին, գալիս էին արյուն տալու հայրենիքի ազատագրության համար արյուն թափած մարտիկներին»[1]: Առկա փաստերը, վկայությունները ևս մեկ անգամ համոզում են այն իրողությունը, որ ազատամարտի ողջ ընթացքում նշանակալի դեր ունեցան կին բուժաշխատողների աշխատանքները, հատկապես ռազմի դաշտում: Առաջին գծում՝ ռազմադաշտային շարժական հոսպիտալներում աշխատող կին բուժաշխատողներն իրականացրին հարյուրավոր վիրավոր ազատամարտիկների առաջին բուժօգնության և վիրահատական գործողություններ, որի շնորհիվ ապաքինված ազատամարտիկները կարողացան վերադառնալ մարտի դաշտ:

Արցախի ազատագրական պայքարի տարիներին իր ավանդը բերեց նաև Ստեփանակերտի մարզային հիվանդանոցի գլխավոր բժիշկ Լյուդմիլա Օվչարենկոն: Նրա նախաձեռնող աշխատանքներից էր բժշկական բրիգադների կազմավորումը, որոնք ուղարկվում էին մարտական գործողությունների վայր: Բժիշկ-համաճարակաբանի շնորհիվ պատերազմի տարիներին և դրանից հետո պաշտպանության բանակը կարողացավ խուսափել մասսայական համաճարակներից: Լ. Օվչարենկոն ծառայության ընթացքում լեյտենանտի աստիճանից հասավ մայորի կոչման և մինչ թոշակի անցնելը զբաղեցնում էր բժշկական ծառայության պետի տեղակալի պաշտոնը[2]:

Չնայած վտանգը մեծ էր, այնուամենայնիվ, կանայք շարունակում էին արձագանքել զինված ուժերի կոչերին և մեկնում առաջին գիծ: Որպես բուժաշխատողներ, նվիրյալների շարքերը համալրեցին նաև Աիդա Սերոբյանը, Թամարա Աբրահամյանը, Սուսաննա Կոստանդյանը, Պոլինա Գրիգորյանը, Նունե Աթայանը, Ալվարդ Աբալյանը, Մարիետա Քալաշյանը, Անժելա Հակոբյանը, Շուշանիկ Թամրազյանը, Ալլա Հարությունյանը, Կարինե Աղեկյանը և շատ ուրիշներ[3]:

Նվիրական գործ կատարեցին նաև թիկունքի կանայք, ովքեր վիրավոր ազատամարտիկներին խնամելուց բացի բազմիցս հանդես էին գալիս որպես դոնորներ: Նրանց թվում էր Անյա Ավանեսյանը[4], ով, կենտրոնական հոսպիտալում աշխատելով որպես տնտեսվար, պատերազմի օրերին խնամում էր վիրավոր ազատամարտիկներին, հարկ եղած դեպքում նրանց կյանքը փրկում՝ արյուն տալով: Նա չհասցրեց վայելել հաղթանակի բերկրանքը, սակայն նրա շնորհիվ բազմաթիվ փրկված ազատամարտիկներ իրենց գործը շարունակեցին մինչև հրադադար:

---

[1] *Նույն տեղում, 2012, 13-20 հոկտեմբերի, թիվ 41:*
[2] *«Ազատ Արցախ », 2004, 17 հունիսի, թիվ 67:*
[3] *Նույն տեղում, 2008, 19 մայիսի:*
[4] *Նույն տեղում, 2000, 12 ապրիլի, թիվ 7:*

1992թ. ստեղծված Պաշտպանության պետական կոմիտեն առաջին իսկ օրվանից սկսեց եռանդուն միջոցներ ձեռնարկել բանակը կազմակերպական տեսանկյունից կուռ համակարգի վերածելու ուղղությամբ: Կոմիտեի նախագահի՝ 1992թ. օգոստոսի 14-ի N2 հրամանագրով ԼՂՀ-ն բաժանվեց վեց պաշտպանական շրջանների[1]:

1992թ. օգոստոսի 14-ի հրամանով՝ սեպտեմբերին ինքնապաշտպանական ուժերի ստորաբաժանումների հիմքի վրա կազմավորվեցին նաև 4-րդ պաշտպանականը կամ Ասկերանի պաշտպանական շրջանը՝ Վ. Բալասանյանի հրամանատարությամբ, 1-ին պաշտպանականը կամ Հադրութի պաշտպանական շրջանը՝ Ա. Աղաբեկյանի հրամանատարությամբ և 2-րդ պաշտպանականը կամ Մարտունու պաշտպանական շրջանը, որի հրամանատարն էր Մ. Մելքոնյանը[2]:

Պաշտպանական շրջանների ստեղծման իսկ առաջին օրվանից անհրաժեշտություն առաջացավ լուծել բուժկետեր ստեղծելու հարցը: 4-րդ պաշտպանական շրջանի բուժծառայություն ստեղծվեց գնդի կազմավորմանը զուգընթաց (1992թ. սեպտեմբեր): Այն տեղակայված էր ռազմաճակատային գծից 5 կմ հեռավորության՝ ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող ուղու վրա, որտեղ ծառայող բուժքույրերը մասնակցում էին գնդի վարած բոլոր ռազմագործողություններին: Նրանց շարքերում էին նաև Սվետլանա Հովսեփյանը, Կարինե Գրիգորյանը, Ռիտա Հարությունյանը, Հասմիկ Հայրապետյանը, Զոյա Միրզոյանը, Գայանե Գաբրիելյանը, Ալլա Արզումանյանը, Սրբուհի Աղաջանյանը և շատ ուրիշներ[3]:

Պատերազմի հենց առաջին օրերին Մարտունու շրջանի բժշկուհի Իրինա Գրիգորյանը հայտնվեց առաջին գծում: Արդեն 1992թ. ապրիլից միանալով Արմեն Մելքումյանի գումարտակի կազմին՝ մասնակցեց մի շարք ռազմական գործողությունների[4]: 1992թ. հունիսի 28-ին թշնամին մեծ թվաքանակով և տեխնիկայով հարձակում կատարեց Ամարասի ձորակի վրա՝ Կարմիր Շուկա, Պուլուր խուտ, Դավալու խուտ, Ուրյան սար, իսկ մի շարք գյուղեր՝ Սոս, Մաճկալաշեն, Ճարտար, Կարմիր Շուկա, տարհանվել էին: Ուժեղ հրետակոծությունից տուժել էին նաև Սոս և Մաճկալաշեն գյուղերի բնակիչները: Այդ ծանր օրերին Ի. Գրիգորյանն օգնություն էր ցուցաբերում ոչ միայն ազատամարտիկներին, այլ նաև խաղաղ բնակիչներին:

Պատերազմի օրերին ինքնապաշտպանական ուժերը համալրած կանայք ստիպված էին ջոկատների հետ ժամանակ առ ժամանակ տեղից տեղ շարժվել, հատկապես այնտեղ, ուր թեժ մարտեր էին ընթանում:

---

[1] *ԼՂՀ պաշտպանության նախարարության արխիվ, գ. 31, թ. 3-5:*
[2] *Նույն տեղում, թ. 9-11:*
[3] *ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ. 1, թ. 1-3:*
[4] *Տե՛ս Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, Երևան, 2011, էջ 166:*

Հոկտեմբերի 23-ին Մովսես Հակոբյանի հրամանատարությամբ գործող զորախմբի հետ Ի. Գրիգորյանը՝ որպես փորձառու բժշկուհի, ևս մասնակցեց Հորադիզի համար մղվող ծանր մարտերին, որի ժամանակ նույնիսկ փրկեց թուրք գերու կյանքը: Հոկտեմբերի 28-ին միացավ Զանգելանի շրջանի ազատագրմանը, որի ժամանակ ականի վրա պայթել էր հրամանատարական մեքենան: Բժշկուհին, անտեսելով սեփական անվտանգությունը, ականապատված դաշտով օգնության հասավ վիրավորներին և առաջին օգնությունը ցուցաբերեց ու փրկեց բոլորին: 1993թ. ձմռանը միացավ Մարտունու շրջանի Գևորգավանի տեղամասի մարտերին, իսկ արդեն 1994թ. հունվարին նշանակվեց 3-րդ պաշտպանական շրջանի թերապևտ և շարունակեց ծառայել մինչև հրադադար, ավելին՝ մայիսի 9-14-ը մասնակցեց Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի համար մղվող մարտերին: Ի.Գրիգորյանն այն բժշկներից էր, ով մասնակցեց ազատամարտին՝ առաջին գծում ստանձնելով և բժշկի, և բուժքրոջ, և զինվորի դժվարին պարտականությունները: Հրադադարից հետո չլքեց հարազատ գունդը և դարձավ նրա բուժծառայության պետը[1]:

Ռազմադաշտ մեկնող կանայք, իհարկե, ունեին իրենց հիմնական և կարևոր պատճառները, որոնք են՝ հայրենասիրական մղում, իրավիճակի թելադրանք և հարազատներին մոտ լինելու պատճառ:

Մոնթե Մելքոնյանի նախաձեռնությամբ Մարտունու շրջանում ստեղծվեց բուժկետ՝ առաջնագծում մարտնչող ջոկատներին օգնություն ցույց տալու նպատակով: Բուժկետի աշխատանքներին ներգրավվեց նաև Էլեոնորա Աղաբեկյանը, ով հենց առաջին օրվանից հերթապահության անցավ պաշտպանական դիրքերում՝ «109», Ղարաչուխ, Ավդալ, Մուղանլու: Նա դեռևս 1990թ. համալրել էր Մարտունու կամավորական ուժերը որպես բուժքույր և ամուսնու ու որդիների հետ մասնակցել մի շարք մարտական գործողությունների[2]: Այդ օրերին, «Գրադ» կայանքների սաստիկ կրակի ու գնդակոծության տակ արհամարհելով վտանգը, բուժքույրը փրկել է տասնյակ վիրավորների: Նման պատասխանատվություն և անձնուրացություն է ցուցաբերել նաև Ամիրանլար, Կուրոպատկինո և Մուղանլու գյուղերի ազատագրման մարտերի ժամանակ:

Հայ կինը ուրույն է իր էությամբ, քանզի հայոց պատմության մեջ հայ կնոջ դերը կենսական է եղել ազգապահպանման գործում: Հավատարիմ մնալով ի վերուստ սահմանված մայր լինելու առաքելությանը՝ միաժամանակ ուժ ու կորով է հաղորդել հայ տղամարդուն, պայքարել նրա հետ միասին՝ նաև պահպանելով ու սերունդներին փոխանցելով ազգային ինքնությունը: Ռոզա Մուսայելյանը, Առլետա Ազիզյանը, Անժելա Արզումանյանը, Ռոմելա Ղուկասյանը, Ռիտա Այդինյանը, Սեդա Բաբայանը, Թամարա Բալայանը, Արեգա Բաբայանը, Արզելա

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Տե՛ս «Ամարաս», 2005, 10 մայիսի:*

Բալայանը, Լաուրա Խալափյանը, միանալով Մարտունու հոսպիտալի աշխատողներին, մասնակից դարձան մի շարք ռազմագործողությունների և փրկեցին հարյուրավոր զինվորների կյանք[1]:

Հարկ է նշել, որ հայկական ուժերը, ռազմական գործողություններ ծավալելով ԼՂԻՄ հարակից շրջաններում, նպատակ ունեին ԼՂՀ համար ստեղծել անվտանգության գոտի: Ռազմական նշանակության շրջանների ազատագրմամբ՝ ապահովվում էր խաղաղ բնակչության անվտանգությունը: Այդ ամենը շատ լավ էին գիտակցում պաշտպանությանը միացած կանայք, որոնց մի մասը որպես գթության քույրեր, բուժաշխատողներ, իրենց ավանդն ունեցան հայրենիքի ազատագրման գործում:

Հավելենք, որ Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում (2020թ սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը) կանայք ևս միացան երկրի պաշտպանության համար պայքարին: Այդ ծանր օրերի բուժհամակարգի շատ կանայք չլքեցին իրենց աշխատավայրերը, ավելին, անտեսելով բոլոր վտանգները, շարունակեցին նվիրական գործը, որի շնորհիվ փրկվեցին մարտի դաշտում ծանր վիրավորում ստացած հազարավոր զինվորներ, կամավորներ: 44-օրյա պատերազմում ունեցած հազարավոր զոհերի, հարյուրավոր անհայտ կորածների ու գերիների մեջ կային նաև կանայք՝ ինչպես քաղաքացիական անձեր, նույնպես և զինվորական ծառայության մեջ գտնվող նվիրյալներ:

Արցախյան և՛ առաջին, և՛ երկրորդ պատերազմներում կանայք, դիմակայելով բոլոր մարտահրավերներին, իրենց տեղն ու դերն ունեցան հայրենիքի պաշտպանության գործում:

Գրականություն

Արխիվ

1. ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ. 1, թ. 1-3:
2. ԼՂՀ Պաշտպանության նախարարության արխիվ, գ. 31, թ. 3-5:

Գրքեր

1. Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001:
2. Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, Երևան, 2011:
3. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 թթ., հանրագիտարան, Երևան, 2004:
4. Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, Երևան,2002:

[1] *ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ1, թ. 1-3:*

Հոդվածներ

1. Բալայան Ռ., Կանայք Արցախյան պատերազմի հերոսամարտում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», թիվ 1, Ստեփանակերտ, 2001, էջ 103-108:

Պարբերական մամուլ

1. «Ազատ Արցախ», 2000, 12 ապրիլի, թիվ 7, 2004, 17 հունիսի, թիվ 67, 2008, 19 մայիսի, 2009, 9 մայիսի, թիվ 52:
2. «Ամարաս», 2005, 10 մայիսի:
3. «Մարտիկ», 2004, 10 մայիսի, թիվ 12, 2010, 11 մարտի, թիվ 8, 1998, 5-20 սեպտեմբերի, թիվ 10, 2006, 7-15 հունվարի, թիվ 2, 2012, 13-20 հոկտեմբերի, թիվ 41:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը: